ISSN 1829-0469
ISSN 2579-2687

ԵՐԵՎԱՆԻ ԿՈՄԻՏԱՍԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻԱՅԻ ԱՄՍԱԹԵՐԹ

ԵՐԱԺՇՏ

Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա
Yerevan Komitas State Conservatory
Ереванская государственная консерватория им.Комитаса

Լույս է տեսել ISSN 1829-0469 թղթային տարբերակը 2005թ. դեկտեմբերի 25-ից (233)

#5 մայիս 2025

ԿԱՅԱՑԱՎ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԸ

ԵՊԿ ռեկտորի պաշտոնակատար՝ Ծ. Մովսիսյան, դասախոսներ, գիտաժողովի մասնակից ուսանողներ

2

«ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻՆ ՆՈՐՈՎԻ ԲԱՑԱՀԱՅՏԵԼՈՒ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ»



2

«ՀԱՅԿԱԿԱՆ ՌՈՄԱՆՍԻԱԴԱ» ՄՐՑՈՒՅԹԻ ԴԱՓՆԵԿԻՐՆԵՐԻ ՀԱՄԵՐԳԸ ԵՊԿ-ՈՒՄ

3

Սարգիս Նազարեթյան, Հայկ Փողրատյան, Մարիա Դավթյան, Գայանե Հովհաննիսյան, Դավիթ Ղազարյան, Ծովինար Մովսիսյան, Բարսեղ Թումանյան, Պավել Հայրիյան, Թովմաս Թովմասյան, Սոնա Գևորգյան, Վահրամ Կարապետյան, Հայկական ռոմանսիադա մրցույթի դափնեկիրների համերգին

ՏՈՆԻ ՎԵՐԱԾՎԱԾ՝ ՍՎԵՏԼԱՆԱ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆԻ ՀԱՄԵՐԳՆԵՐԸ

4

«ՀԱՒԵՐԺԱԿԱՆ ՎԵՎԱԼՏԻՆ» ԿԱԼԱ-ՀԱՄԵՐԳԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԲԱՒ ՎԱՅԵԼՈՂ ՀԱՅ ԵՒ ՕՏԱՐ ԵՐԱԺԻՇՏՆԵՐՈՒ ԿԱՏԱՐՈՂՈՒԹԵԱՄԲ

6

«Հենց Կոմիտաս էինք նվագում, գերմանացիները ոտքի էին կանգնում». կոնսերվատորիայի Գյումրիի մասնաճյուղի կամերային նվագախումբը համերգային շրջագայության էր

ԵՊԿ Գյումրիի մասնաճյուղի կամերային նվագախմբի համերգը Շիրակացի անվան պետական համալսարանում

7

«ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻՆ ՆՈՐՈՎԻ ԲԱՑԱՀԱՅՏԵԼՈՒ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ»

1

2025 թ., մայիսի 6-ին, Երևանի Խաչատուր Աբովյանի տուն-թանգարանում կայացավ «Խաչատուր Աբովյանի գործունեության երաժշտական ուրվագիծը» գրքի շնորհանդեսը:

Ժողովածուն ներառում է 2024 թ. կայացած գիտաժողովի նյութերը, որը նվիրված էր Խաչատուր Աբովյանի ծննդյան 215-ամյակին և Երևանի Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիայի Միջառարկայական մասնագիտացման կենտրոնի հիմնադրման 5-ամյակին:

Թանգարանն իր յուրովի հանդիսավոր սրահում հյուրընկալեց ժողովածուի ստեղծման գործում իրենց ներդրումն ունեցող մասնագետներին, ինչպես նաև, առհասարակ, Խ. Աբովյանի եզակի արժեքը գնահատող մարդկանց:

Ողջույնի խոսքով ներկայացան Արևիկ Ստամբոլցյանը, Ծովինար Մովսիսյանը և Լիլիթ Եփրեմյանը:

Այնուհետև, ԵՊԿ Ակադեմիական երգեցողության մասնագիտացմամբ 2-րդ կուրսի ուսանողները (ղեկավար՝ ԵՊԿ Օպերային պատրաստման ամբիոնի «Պար և բեմական շարժում» դասընթացի դասախոս Անահիտ Զաքարյան) հանդես եկան պարային ելույթներով, գեղարվեստական թարմ շունչ և տրամադրություն հաղորդելով հանդիսատեսին:

Պարային ընդմիջմանը հաջորդեց ԵՊՀ դոցենտ, լեզվաբան Նարինե Դիլբարյանի բովանդակալից բանախոսությունը:

Նշենք, որ ժողովածուն հրատարակման է երաշխավորվել կոնսերվատորիայի և Խ. Աբովյանի տուն-թանգարանի գիտական խորհուրդների կողմից:

Գրախոսներն են՝ բանասիրական գիտությունների թեկնածու, ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի դեկան Արշալույս Գալստյանը և արվեստագիտության թեկնածու, դոցենտ, ԵՊԿ ռեկտորի պաշտոնակատար Ծովինար Մովսիսյանը, ով նաև ստանձնել է գրքի մասնագիտական խմբագրի աշխատանքը:

Կազմող-հիմնադիրներն են՝ արվեստագիտության թեկնածու, դոցենտ Լիլիթ Եփրեմյանը և Խ. Աբովյանի տուն-թանգարանի տնօրեն Արևիկ Ստամբոլցյանը:

Գիրքը հրատարակվել է 2025-ին, «Հայաստան» հրատարակչության կողմից (գրականագետ և տնօրեն՝ Վահագն Սարգսյան), որի բարձրորակ մասնագետները երկար տարիներ համագործակցում են կոնսերվատորիայի հետ՝ լույս ընծայելով գիտական ու գեղարվեստական բարձրարժեք դասագրքեր:

Գիրքը բաղկացած է երեք մասից:

Ժողովածուի առաջին բաժնում տեղ են գտել ԵՊԿ-ի և Խ. Աբովյանի տուն-թանգարանի հետ համատեղ իրականացված գիտաժողովի նյութերը, որոնց հեղինակներն են՝ Վահե Գևորգյանը, Լիլիթ Եփրեմյանը, Հասմիկ Հարությունյանը, Մարինե Մավիսակյանը և Աստղիկ Մարտիրոսյանը: Այստեղ շոշափվում են Խ. Աբովյանի և հայ ավանդական երաժշտության, իր ուսուցչի՝ Յոհան Բենիամին Գրոսի կյանքի և գործունեության, հայկական երաժշտական մշակույթի զարգացման և այս հարցի շուրջ Աբովյանի տեսլականի, Կոմիտաս Վարդապետի և Խ. Աբովյանի հոգևոր կապի, ինչպես նաև Աբովյանի խոսքերով գրված Կոմիտասի «Վայ էն ազգին» երգին վերաբերող խնդիրները:

Մյուս բաժնում զետեղված են Խ. Աբովյանի երաժշտական գործունեությանը նվիրված, առ այսօր տարբեր առիթներով, տարբեր աղբյուրներում հրատարակված հոդվածները և ուսումնասիրությունները, մասնավորապես՝ Պիոն Հակոբյանի, Մաթևոս Մուրադյանի, Մարինե Մավիսակյանի, և Միեր Նավոյանի հեղինակությամբ:

Ժողովածուի երրորդ մասում ներկայացված են իր իսկ՝ Խ. Աբովյանի երաժշտագիտական ուսումնասիրությունները:

Այս բաժնում ներառված են Խաչատուր Աբովյանի «Հայոց եկեղեցական և ժողովրդական երաժշտությունը» ուսումնասիրության թարգմանությունը, Պիոն Հակոբյանի առաջաբանով, Հովհաննես Ջատիկյանի ներկայացմամբ՝ էջեր Աբովյանի դորպատյան օրագրից:

Հավելվածում պատկերավոր կերպով ներկայացված է «Խ. Աբովյանի կերպարն ու ստեղծագործությունները հայ կոմպոզիտորների երկերում» վերնագիրը կրող անվանացանկը, որը կազմել է թանգարանի ավագ գիտաշխատող Սաթենիկ Ավոյանը:

Շնորհանդեսի ավարտին ջերմ մթնոլորտ էր տիրում սրահում: Ղեկավարները հույսով և սիրով հայտնեցին նորանոր համատեղ նախաձեռնություններ իրականացնելու իրենց պատրաստակամությունը, որը կնպաստի Խաչատուր Աբովյանին նորովի ճանաչելու և գնահատելու գործին, ինչպես նաև կոնսերվատորիայի ու Խաչատուր Աբովյանի տուն-թանգարանի բարեկամական կապի ամրապնդմանը:

«Խաչատուր Աբովյանի գործունեության երաժշտական ուրվագիծը» գրքի շնորհանդեսը իրավամբ կարևոր մշակութային և գիտական իրադարձություն էր, քանի որ ժողովածուն բավականին մեծ արժեք ունի Խ. Աբովյանի բազմաշերտ ստեղծագործական գործունեության լուսաբանման, հատկապես երաժշտական արվեստի հետ սերտ կապերի ավելի խորը ուսումնասիրության և նոր բացահայտումների առումով:

ԵՊԿ Ակադեմիական երգեցողության մասնագիտացմամբ երկրորդ կուրսի ուսանողների պարային ելույթը, ղեկավար՝ ԵՊԿ Օպերային պատրաստման ամբիոնի «Պար և բեմական շարժում» դասընթացի դասախոս Անահիտ Զաքարյան

Արևիկ Ստամբոլցյան, Լիլիթ Եփրեմյան

Արևիկ Ստամբոլցյան, Ծովինար Մովսիսյան

ՍՈՒՍԱՆՆԱ ՄԱՐՋԱՆՅԱՆ
Երաժշտագետ, 2-րդ կուրս
Ղեկ.՝ արվեստագիտության թեկնածու, դոցենտ Ծովինար Մովսիսյան

ԿԱՅԱՑԱՎ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԸ

Ծովինար Մովսիսյան, Վահե Գևորգյան

ԵՊԿ Գյումրիի մասնաճյուղի ռեկտորի պաշտոնակատար Հասմիկ Հարությունյանը, ԵՊԿ և Գյումրիի մասնաճյուղի դասախոսները, ուսանողները

Ռուզաննա Ստեփանյան, Թամարա Սարգսյան

1

Մայիսի 15-ին և 16-ին, ԵՊԿ-ում կայացավ Ուսանողական Գիտական ստեղծագործական ընկերության գիտաժողովը, որին զեկուցումներով ելույթ ունեցան Խ. Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանի, Կապանի արվեստի պետական քոլեջի, Առնո Բաբաջանյանի անվան պետական երաժշտամանկավարժական քոլեջի, Ռոմանոս Մելիքյանի անվան պետական երաժշտական քոլեջի սաները, ԵՊԿ և Գյումրիի մասնաճյուղի ուսանողները: Նիստերը վարեցին ԵՊԿ ռեկտորի պաշտոնակատար՝ արվեստագիտության թեկնածու, դոցենտ Ծովինար Մովսիսյանը և Երաժշտության տեսության ամբիոնի վարիչ՝ արվեստագիտության թեկնածու, դոցենտ Ռուզաննա Ստեփանյանը:

Դեռևս Արամ Խաչատրյանի 120-ամյակի առթիվ կազմակերպած գիտաժողովում առաջին անգամ մասնակից ուսումնական հաստատություններին միացել էր Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտը, որի ներկայացուցիչն այս անգամ ևս հանդես եկավ հերթական հաղորդմամբ:

2024-2025 ուսումնական տարվա գարնանային գիտաժողովին ներկայացվեց 33 զեկուցում: Եզրափակիչ օրը գլխավորապես ԵՊԿ բակալավրական ու մագիստրոսական կրթական ծրագրով սովորող երաժշտագետներն էին, ևս երկուսը ԵՊԿ տարբեր մասնագիտացումների հետազոտական աշխատանքով հետաքրքրվող ուսանողներն էին, իսկ ԵՊԿ Գյումրիի մասնաճյուղը մայր բուհում ներկայացավ պատմատեսական աշխատանքներ պատրաստած ութ սաներով:

https://www.facebook.com/YerevanStateConsevatory



Միխայիլ Կոկժան, Հեղինե Խաչատրյան

Կայացավ «Հայկական ռոմանսիադա» մրցույթի դափնեկիրների համերգը

1

«Ռոմանս ժանրում շատ կարևոր է պատկերացնել խոսքի ուժը, իմաստի խորությունը: Այն միայն քնարական բովանդակությամբ ժանր չի: Միշտ պետք է մտածեք՝ ինչու է ծնվել այս գործը, ինչու եմ այն երգում: Շատերը բնազդաբար լավ են կատարում. անհրաժեշտ է բնությանը միացնել բանականությունը, իմացությունը», – դիմելով «Հայկական ռոմանսիադա» մրցույթի դափնեկիրներին՝ նշեց հայ վոկալ կատարողական ու մանկավարժական արվեստի մեծանուն ներկայացուցիչ և մրցույթի այս տարվա հանձնաժողովի անդամ Բարսեղ Թումանյանը:

Մայիսի 16-ին կայացավ «Հայկական ռոմանսիադա» մրցույթի դափնեկիրների համերգը: 2025 թ. առանձնացավ մասնակիցների ու հաղթողների ընդգրկմամբ, որտեղ լսելի դարձան ինչպես Երևանի կոնսերվատորիայի ներկա ու շրջանավարտ սաների, այնպես էլ Առնո Բաբաջանյան երաժշտամանկավարժական քոլեջի և Ռոմանոս Մելիքյանի անվան պետական երաժշտական քոլեջի մեներգիչների ձայները:

Համերգի ավարտին մրցույթի համակազմակերպիչ՝ Հայաստանի երաժշտական ընկերության նախագահ ԵՊԿ պրոֆեսոր Դավիթ Ղազարյանը պատվավոր «Կոմիտաս» հուշամեդալներ շնորհեց ՀՀ ժողովրդական արտիստ Բարսեղ Թումանյանին և «Մեր ապագան» բարեգործական կրթական և մշակութային հիմնադրամի գործադիր տնօրեն Վահրամ Կարապետյանին:

«Հայաստանն ամբողջ աշխարհում ճանաչված է իր բացառիկ մեներգիչներով: Հույս ունենք, որ մեր մրցույթը կնպաստի դուրս գալու նոր ու նշանակալի բեմեր հնչեցնել Հայաստանի ձայնը», – ամփոփեց Վահրամ Կարապետյանը:

Թովմաս Թովմասյան, նվագակցող՝ Սոնա Գևորգյան

Դավիթ Ղազարյան, Վահրամ Կարապետյան

Բարսեղ Թումանյան

2025 թ. «Ռոմանսիադա» Մոսկովյան միջազգային մրցույթի եզրափակիչ փուլը կկայանա դեկտեմբերին: Հայաստանը կներկայացնի «Հայկական ռոմանսիադա»-յի հաղթող Թովմաս Թովմասյանը:

Համերգին մասնակցեցին՝ Թովմաս Թովմասյանը (1-ին մրցանակ), Սարգիս Նազարեթյանը (2-րդ մրցանակ), Պավել Հայրիյան (3-րդ մրցանակ), հատուկ անվանակարգերի դափնեկիրներ՝ Գայանե Հովհաննիսյանը («Միս հայկական ռոմանս»), Մարիա Դավթյանը («Հանդիսատեսի համակրանք»), Հայկ Փոդրատչյանը («Ազգային ռոմանս»):

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Erasmus+ դասախոսների շարժունակության ծրագիրը և *AEC*-ը *AEC – European Association of Conservatoires* (Եվրոպական կոնսերվատորիաների ասոցիացիան)՝ Բրյուսելի Թագավորական կոնսերվատորիայի *(Conservatoire royal de Bruxelles)* համակարգմամբ 2025 թ., ապրիլի 14-16-ը, Վալենսիայի «Խոակին Ռոդրիգո» կոնսերվատորիայում *(Conservatori Superior de Música "Joaquín Rodrigo" de València)* իրականացրեցին *HarMA HUB (Harmony and Music Analysis)* սեմինարը: Այն նպատակ ունի մեկտեղել բարձրագույն երաժշտական ուսումնական հաստատությունների երաժշտության տեսության ֆակուլտետները/ամբիոնները՝ խոսելու իրենց հաստատություններում երաժշտատեսական առարկաների դասավանդման կազմակերպման մասին, կիսելու միջազգային նախագծերում մասնակցության փորձը, ծանոթանալու այս ոլորտում դասավանդման նորարարական մեթոդներին: Թվով չորրորդ սեմինարը ոչ միայն բարձրագույն կրթության ոլորտում համագործակցության նոր հնարավորություն էր, այլև եվրոպական կոնսերվատորիաների միացյալ հարթակ՝ ստեղծելու գործընկերների մշակված ընդհանուր մասնագիտական գործիքանին՝ *EU Glossary* (մասնագիտական բառարան) – *EU Bibliography* (մատենագիտական ցանկ) – *Music Analysis Repository* (երաժշտական վերլուծությունների պահոց) – *Peer Journal* (միասնական պարբերական): 43 բարձրագույն երաժշտական ուսումնական հաստատությունները ներկայացնող 90 մասնակիցների շարքում էին Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի Երաժշտության տեսության ամբիոնի վարիչ՝ արվեստագիտության թեկնածու, դոցենտ Ռուզաննա Ստեփանյանը և նույն ամբիոնի դոցենտ, արվեստագիտության թեկնածու, ռեկտորի պաշտոնակատար Ծովինար Մովսիսյանը: Մասնակից երկրների բարձրագույն երաժշտական ուսումնական հաստատությունները նախապես ուղարկել էին տեղեկություններ իրենց բուհերի, երաժշտատեսական դասընթացների, սեփական փորձառության մասին և կոնկրետ առաջարկված երաժշտական ստեղծագործության վերլուծությունը: *HarMA*-ն նպատակ ունի նպաստել *HMEI*-ում երաժշտության տեսության ոլորտում որակի չափանիշների զարգացմանը: Կազմակերպության չորրորդ հանդիպումը կենտրոնացած էր միջազգայնացման, թվայնացման և դասավանդման գործընթացում նորարարական մեթոդների վրա: Թեմաների վերաբերյալ հնչեցին զեկուցումներ, տեղեկատվության փոխանակում, մի քանի կոնկրետ թեմաներով զրույցներ և կլոր սեղան քննարկումներ: Թրեյնինգների նպատակն էր խորացնել մասնակիցների երաժշտատեսական առարկաների դասավանդման պրակտիկ հմտությունները: Համեմատական վերլուծության արդյունքներն ամփոփեց Մարկ Գարսիա Վիտորիան *(Conservatori Superior de Música "Joaquín Rodrigo" Valencia,* Իսպանիա), գլխավորում էին Ջոն Կոսլովսկին *(KULeuven,* Բելգիա) և Ալբերտո Մարտինը *(The Purcell School, UK):* Սեմինարի օրակարգում էին նաև մշակութային ճանաչողական ծրագրեր, այցելություններ Վալենսիայի տեսարժան վայրեր և այլն: Մասնակիցներին տրվել են *ERASMUS+* անձնակազմի՝ դասախոսների շարժունակության վկայականներ:

Էդվին Կլապույտ (Բրյուսելի Թագավորական կոնսերվատորիայի Երաժշտության վերլուծության պրոֆեսոր, HarMA սեմինարի և HarMA աշխատարանի անդամ), Ռուզաննա Ստեփանյան, Ծովինար Մովսիսյան, Սալվատորե Ջիովենի (HarMA նախագծի և սեմինարի հիմնադիր, նախագահ, միջազգային հարաբերությունների ֆակուլտետի համակարգող, երաժշտության տեսության բաժնի դեկավար)

https://www.facebook.com/YerevanStateConsevatory

ՄԻ ՆԿԱՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Սիմֆոնիկ նվագախումբը Լենինականում, 1937 թ.



ՏՕՆԻ ՎԵՐԼԾՈՒԼԾ՝ ՍՎԵՏԼԱՆԱ ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ ՀԱՄԵՐԳՆԵՐԸ

Յատուկ «ՊԱՅՔԱՐ»ԻՆ

ԿԱՐԻՆԷ ՏԷՐ ԳԷՈՐԳԵԱՆ

1

«Սվետլանա Նաւասարդեանը՝ ՀՀ Ժողովրդական արտիստ, Շումանի, Պախի, Էլիզապէթ թագուհու, Միտնիի միջազգային մրցոյթների դափնեկիր, Կառավարական բարձր պարգեւներ՝ «Մ. Մեսրոպ Մաշտոց» եւ «Պատուոյ» շքանշանների ասպետ, Երաժիշտ, ով համաշխարհային դաշնամուրային արուեստի պատմութեան մէջ հաստատուն կերպով դրել է իր ինքնագիրը՝ բացարձակապէս ինքնատիպ եւ անկրկնելի...».

Կ.Տ.Գ.

Տօն էր Լարք երաժշտական ընկերակցութեան համալիրում:

Լարքը ներկայացրեց համաշխարհային համբաւի տիրացած հայրենի դաշնակահարուհի Սվետլանա Նաւասարդեանի երկու մենահամերգ՝ «Երաժշտութեան խաչմերուկներում» խորագրով: Ռոպերթ Շումանի (1810-1856) եւ Ֆրետերիկ Շոփէնի (1810-1849) ծննդեան 215 ամեակին նուիրուած դաշնամուրային երաժշտութեան երեկոները կայացան 22 Փետրուար եւ 12 Մարտ, 2025 թ., Լարքի համալիրի «Թրպանճեան» սրահում:

«Այս ծրագրի իրականացումը իմ պաշտամունքի արտայայտումն է սիրելի հեղինակներիս հանդէպ, ինչով կը կամենայի կիսուել ունկնդրիս հետ», ասում է Սվետլանա Նաւասարդեանը:

Ռոմանտիկ կոմպոզիտորներ Շումանը եւ Շոփէնը Նաւասարդեանի կուռքերն են պատանեկան տարիքից եւ ուղեկցում են նրան ստեղծագործական ողջ կեանքի ընթացքում, իւրօրինակ անդրադարձ ունենալով նաեւ դաշնակահարուհու կենսագրութեան մէջ:

Դեռեւս տասնինը տարեկանում Սվետլանան արժանանում է Շումանի անուան դաշնակահարների միջազգային մրցոյթի դափնեկրի կոչման՝ Շումանի ծննդավայր Ցուիկաու քաղաքում (Գերմանիա): Ի դէպ Սվետլանա Նաւասարդեանը միջազգային մրցոյթի Հայաստանի առաջին դափնեկիր դաշնակահարն է:

Նաւասարդեանի արտասահմանեան առաջին մենահամերգները կայացել են Շոփէնի ծննդավայր Ժելեազովա Վոլեայում (Լեհաստան): Շումանը առաջինն էր, ով ողջունել էր երիտասարդ Շոպէնի մուտքը մեծ արուեստ, գրելով իր հրատարակած «Նոր Ռէյնիան թերթում. «Գլխարկներդ դեմ, պարոնայք, ձեր առջեւ հանճար է»:

Եւ Սվետլանա Նաւասարդեանը երաժշտական աշխարհի այս հսկաների յօրինուածքներով մեզ պիտի տանէր զարմանահրաշ ճամբորդութեան:

Համերգ Առաջին

Առաջին բաժինը նուիրուած էր Ռ. Շումանին: Կատարուած գործերն էին Fantastic Pieces (op.12) շարքից՝ «Երեկոյեան» (In The Evening), «Ինչո՞ւ», (Why) դաշնամուրային մանրանուագները, որոնց յաջորդում էր Dances of the League of David, op.6 - «Դաւթի լիգայի պարեր» շարը՝ բաղկացած 18 պատումից: Շումանը իր երեւակայական աշխարհում ստեղծել էր «Դաւթի եղբայրութիւն (Davidsbund) ընկերակցութիւնը», ուր ներառել էր իր սիրելի երաժիշտներին, իր պաշտած անձերին: «Ընկերակցութեան» մէջ էին նաեւ այս ստեղծագործութեան հենքը հանդիսացող երկու կերպարներ՝ Եւսեբիուսը եւ Ֆլորեստանը, որոնք մարմնաւորում են Շումանի անհատականութեան հակոտնեայ կողմերը. քնարական, բանաստեղծական եւ կրքոտ, պոռթկուն: Ի դէպ, այս մականուններով, կախեալ գրութեան բովանդակութիւնից, Շումանը ստորագրում էր յօդուածներ «Նոր Ռէյնիան թերթում» (1834 – 1844): Կտորները իսկական պարեր չեն, այլ բնորոշ ստեղծագործութիւններ, երաժշտութեան ընդմիջից երկխօսութիւններ Շումանի հերոսների՝ Եւսեբիուսի եւ Ֆլորեստանի միջեւ:

Սվետլանա Նավասարդեանը Վաչէ Պարսումեանի հետ

Ըստ Վաչէ Պարսումեանի՝ Նաւասարդեան դաշնակահարուհու կատարման մէջ ակնյայտօրէն դրսեւորուում էին Շումանի բնաւորութեան երկու հակադիր կողմերը՝ առանց աւելորդ չափազանցութիւնների, իմացական (intellectual) եւ յուզումնային (emotional) կարողութիւնների ներդաշնակ բացայայտումներով, ինչը բնորոշում է իսկապէս մեծ արուեստագէտին:

Յատկանշական է, որ փարիզեան «Activite Musicale» թերթը անդրադառնալով Փարիզի համբաւաւոր Gaveau դահլիճում Սվետլանա Նաւասարդեանի Dances of the League of David-ի կատարմանը՝ դասել է այն երբեւէ լսած լաւագոյնների շարքը:

***

Երկու հանճարների հանդիպման խաչմերուկը տարաւ մեզ համերգի երկրորդ բաժինը, որը սկսուեց Ֆ. Շոպենի Polonaise- ով (C-sharp Minor) եւ աւարտուեց դարձեալ Polonaise-ով (A-flat Major): Երկու Nocturn-ները եւ հինգ Mazurka-ները գեղեցկօրէն տեղաւորուել էին այդ շրջանակի մէջ:

Նաւասարդեանն իր տարերքում էր՝ բանաստեղծութեամբ լեցուն աշխարհ տանելով իր հետ ունկնդրին...

Դաշնակահարուհու արտակարգ հնչիւնային գունապնակը թում է՝ ներառում է դաշնամուր երաժշտական գործիքի բոլոր հնարաւորութիւնները: Կատարողական արտայայտչամիջոցների փայլուն տիրապետումը թոյլ է տալիս նրան ի յայտ բերել յուզական աշխարհի ամենանրբին իսկ ելեւէջները:

Զարմանալի է իսկապէս դաշնամուրը խօսեցնելու Սվետլանայի հազուագիւտ կարողութիւնը: Դաշնակահարուհին գտնում է ունկնդրի հետ հաղորդակցուելու մի նոր լեզու: Երաժիշտ-մեկնաբանը հանրածանօթ գործերին իսկ տալիս է բոլորովին նոր հնչողութիւն: Յանկարծ լսում ես նոր միտք, նոր գիծ, որ չէիր լսել այլ կատարումներում:

Հէնց դա էլ Նաւասարդեանի յայտնագործութիւններից է, որ գալիս է իր բացառիկ անհատականութիւնից: Հոգեւորի գերակայութեան արուեստ է Նաւասարդեանի արուեստը, խոր «անձնաւորուած» կերպարների, հնչիւնների, գոյների... Նաեւ քմայքին ենթակայ արուեստ, ներքուստ չափազանց ազատ, *իմպրովիզացիոն*, սակայն միշտ համոզիչ ու պատճառաբանուած:

Իր ոսկեդարին դաշնակահարուհին հասել է բեմական, կատարողական հսկայ փորձ կուտակած, դասական արուեստը (կերպարուեստն ու գրականութիւնը նոյնպէս) խորապէս ուսումնասիրած, բանաստեղծական իր տիրոյթը կերտած, իմաստացած, Երաժշտութեամբ սքանչացած...

Ամէն անգամ, հետեւելով Նաւասարդեանի նուագին զարմանում ես, որ այն ընթանում է բացարձակապէս ձեռքերի եւ մատների մասնակցութեամբ, առանց մարմնի ցուցադրական շարժումների: Ձեռքերը հանելուց յետոյ նոյնիսկ, ասես իւրայատուկ պահուածքով, կարողանում է երկարածգել դաշնամուրի հնչողութիւնը:

Նմանօրինակ «կախարդանք»ը տեսնելու եւ լսելու էին եկել դահլիճում հաւաքուած ունկնդիրները: Շատերը Սվետլանա Նաւասարդեանի երկրպագուներն էին, մանաւանդ, Հայաստանից փոխադրուածները, ովքեր յատուկ անհամբերութեամբ էին սպասում սիրելի դաշնակահարուհու ելոյթներին, յիշողութեան մէջ ունենալով նրա շռնդալից եւ փայլուն երեւանեան համերգները:

Համերգ Երկրորդ

«Երաժշտութեան խաչմերուկներում» համերգաշարի երկրորդ մենահամերգի առաջին բաժինը նուիրուած էր Շումանին. Arabesque in C Major Op. 18 եւ Kreisleriana Op. 16:

Թագուհի Արզումանեանի ողջոյնը

Արաբեսկ բառի թարգմանութիւնը երաժշտական բառարանը բացատրում է հետեւեալ կերպ. «Ձայնազարդերով լի, նուրբ եւ ճկուն, վայելչագեղ, գալարուն մեղեդային գիծ ունեցող երաժշտական փոքրիկ փիես»: Նաւասարդեանն այն ներկայացրեց որպէս քնարական հոգու խոստովանանք, բանաստեղծական նուրբ թելերով հիւսուած ասեղնագործ զարդանախշ:

Յաջորդ անհամեմատ աւելի ծաւալուն գործը Շումանի երաժշտական նուաճումներից՝ «Կրայսլերիանա»ն էր (նուիրուած է Շոփէնին, 1838 թ.), նրա ստեղծագործութիւնների ամենաղժուարահաս գագաթը, որ գրուած է Եռնեստ Թէոդոր Հոֆմանի համանուն նովելի ընթերցման տպաւորութեան տակ:

Ինչպէս առաջին համերգում հնչած «Դաւիթսբիւնդլերների պարեր»ում, այստեղ եւս փոխադարձաբար շաղկապուած ութը մանրանուագները կազմում են ամբողջական շարք՝ միաւորող թեմայով, «գործող անձերով», իրար հակասող տրամադրութիւններով, փոփոխուող հոգեվիճակներով: Շարքն աւարտում է վերացական՝ երկինք սլացող եւ հետզհետէ մարուող երաժշտութեամբ...

«Սվետլանա Նաւասարդեանը «Կրայսլերիանա»ն կատարեց այնպէս, ինչպէս թերեւս այն կը կամենային լսել Շումանը եւ Հոֆմանը», գրել էր Պուենոս-Այրեսի «Clarin» թերթը: Ասուած խօսքերն այդչափ համահունչ էին մեր վերապրած զգացումներին...

Համերգի երկրորդ բաժնում Շոպէնն էր (մազուրկաները եւ վալսերը):

Լարքի կամարների տակ ազատօրէն թեւածում էին Շոպէնի անմահ մեղեդիները՝ իրենց շրջանն առնելով կատարողին եւ ունկնդրին, թում է պատրաստ՝ դուրս թռչելու դահլիճից...

Երկար ժամանակ չէր աւարտում համերգը: Ունկնդիրների յոտնկայս ծափահարութիւնները կրկին ու կրկին բեմ էին հրաւիրում դաշնակահարուհուն: Եւ կոմիտասեան երգերից մէկի նաւասարդեանական վեհաշունչ կատարումով աւարտուեց համերգաշարի եզրափակիչ համերգը: Աւարտուեցին նաեւ այդքան յուզումնալից վայելքի պահերը...

5

(Շար.ը տեսնել էջ 11)

ՏՕՆԻ ՎԵՐԱԾՈՒԱԾ՝ ՍՎԵՏԼԱՆԱ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ ՀԱՄԵՐԳՆԵՐԸ

(Շարունակուած 10-րդ էջէն)

4

Համերգի պատասխանատու՝ Լարք երաժշտական ընկերակցութիւնը Սվետլանա Նաւասարդեանի հետ ունի գործնականօրէն հարուստ նախանցեալ՝ կազմակերպած մենահամերգներով, վարպետութեան դասերով եւ վերջապէս այն բարեկամութեամբ, որ ձգւում է երկար տարիների վրայ: Սկսած տնօրէնութիւնից մինչեւ դպրոցի փոքրիկ աշակերտները Սվետլանային համարում են իրենց Լարքի անդամը:

Համերգներն արդէն այդ բարեկամութեան երաշխիքն էին, ինչի մասին Սվետլանան արտայայտուեց երեկոյի աւարտին.

«Պատիւ ունեմ ելոյթ ունենալու աշխարհով մէկ ճանաչում ունեցող Լարքում եւ խոնարհումս բերել հաստատութեան հիմնադիր տնօրէն Վաչէ Պարսամեանին: Անչափ շնորհակալ եմ իմ հրաշալի բարեկամին՝ այս համերգաշարը սիրայօժար կերպով միասնաբար ներկայացնելու համար: Շնորհակալ եմ համերգաշարի կազմակերպմանը իր օժանդակութիւնը բերած փոխտնօրէնուհի Թագուհի Արզումանեանին, ինչպէս եւ համերգին սատարող բոլոր անձանց»:

***

Աննախընթաց երեւոյթ էր Լարքի համար ընդունել իր յարկի տակ մեծանուն դաշնակահարուհուն, մի երաժշտի, ով համաշխարհային դաշնամուրային արուեստի պատմութեան մէջ հաստատուն կերպով դրել է իր ինքնագիրը՝ բացարձակապէս ինքնատիպ եւ անկրկնելի...

Շնորհակալութի՜ւն Սվետլանա Նաւասարդեան:

Լուսանկարները՝ *Պերճ Ճամճեանի*

= ՀԵՏԱՔՐՔԻՐ ՓԱՍՏԵՐ

Սանասարյան վարժարանը

Էրզրումի համագումարի անցկացման առաջին շենքը կառուցվել է Մկրտիչ Սանասարյանի կողմից, 1864 թ. և գործել է որպես Սանասարյան վարժարան: XX դարի սկզբում դպրոցում դասավանդվել են հետևյալ առարկաները՝ կրոն, եկեղեցու պատմություն, դասական հայերեն, ժամանակակից հայերեն, օսմաներեն, ֆրանսերեն, թարգմանություն ֆրանսերենից թուրքերեն և թուրքերենից ֆրանսերեն (որպես առանձին առարկա), գերմաներեն, պատմություն (ընդհանուր պատմություն, հայոց պատմություն և օսմանյան պատմություն), աշխարհագրություն, մաթեմատիկական գիտություններ, հաշվապահություն, ֆիզիկա, քիմիա, քաղաքատնտեսություն, գյուղատնտեսություն, նկարչություն, գեղագրություն, երաժշտություն, երաժշտական գործիքների ուսուցում, ֆիզկուլտուրա, ձեռքի աշխատանք: Այս շենքը, որը հայտնի է որպես Էրզրումի համագումարի անցկացման վայր, այրվել է 1925 թվականի հրդեհի ժամանակ: Այն վերանորոգվել է և ներկայումս ծառայում է որպես Համագումարի թանգարան:

ARMENIAN ELECTRONIC ENCYCLOPEDIA
https://www.patreon.com/posts/121925535

ԼԵՀԱՍՏԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ 4-ՐԴ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՓԱՌԱՏՕՆԸ՝ ՎԱՐՇԱՒԱՅԻ Ս. ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷՋ

Ապրիլ 23-ին, Հայոց ցեղասպանութեան 110-րդ տարելիցին եւ Լեհաստանի խորհրդարանին կողմէ Ոճիրը դատապարտող բանաձեւի 20-րդ տարեդարձին նուիրուած ձեռնարկներու ծիրէն ներս՝ Վարշաւայի Սուրբ Երրորդութիւն եկեղեցւոյ մէջ տեղի ունեցած է Հայկական 4-րդ մշակութային փառատօնը:

Փառատօնը կազմակերպուած է հայ-լեհական հասարակական յանձնախումբի նախագահ Հրաչեայ Պօյաճեանի նախաձեռնութեամբ, Լեհաստանի ներքին գործոց նախարարութեան, Հայաստանի Կրթութեան, գիտութեան,

մշակոյթի ու մարզանքի նախարարութեան, Լեհ-հայկական հիմնադրամի միատեղ գանձատրումով, Լեհաստանի մէջ հայ առաքելական եկեղեցւոյ եւ սփիւռքի գործոց յանձնակատարի աջակցութեամբ:

Հայաստանի դեսպանութեան հովանաւորութեամբ տեղի ունեցած հանդիսութեան ելոյթներով հանդէս եկած են դեսպան Ալեքսանդր Արզումանեան եւ Հրաչեայ Պօյաճեան: Ներկայ եղած են Հայ առաքելական եկեղեցւոյ Ուքրաինայի թեմի առաջնորդ, Մարկոս եպիսկ. Յովհաննիսեան, հոգեւոր հովիւ Մինաս աբեղայ Հախվերդեան, Լեհաստանի Գիտութեան եւ բարձրագոյն կրթութեան փոխնախարար Անճէյ Շեփթիցքի, հայ-լեհական խորհրդարանական բարեկամական խումբի ներկայացուցիչներ:

Համերգի ընթացքին հնչած են հայ եւ լեհ մեծանուն վարպետներու ստեղծագործութիւններ՝ երգահան Գրիգոր Առաքելեանի ղեկավարութեամբ, «Ռեգոնանս գոն թուիթի» երգչախումբի, «Սիլեզեան սենեկային նուագախումբ»-ի կատարողութեամբ:

ՀՈՒՇԵՐ

Միհրան Դեմիրճյան

Միհրան Դեմիրճյանին ճանաչում եմ 1965 թվականից, երբ միասին սովորում էինք Ռ. Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարանում: Դեռևս ուսանողական տարիներից Միհրանը, որպես ուդահար աչքի էր ընկնում երաժշտականությամբ և գործիքին տիրապետելու փայլուն տեխնիկայով: Հետագա երաժշտամանկավարժական գործունեության տարիներին Մ. Դեմիրճյանն աչքի ընկավ, որպես խմբավար-նվագավար, գործիքավորող, ուդի համար գրված ձեռնարկի և եռհատորյա ժողովածուների հեղինակ: Միհրան Դեմիրճյանը բազմաշնորհ երաժիշտ էր, ստեղծում էր երգեր, պարեղանակներ, հեղինակ է նաև բազմաթիվ մշակումների: Որպես ուդահար, նա հանրային ռադիոյի ձայնադարանում ունի բազմաթիվ ձայնագրություններ, որոնք հաճախ հնչում են եթերում: Ես երջանիկ եմ, որ տարիներ շարունակ վայելել եմ Միհրանի հետ մտերիմ և ընկեր լինելու բերկրանքը:

ՆՈՐԱՅՐ ԴԱՎԹՅԱՆ
ՀՀ ժողովրդական արտիստ, պրոֆեսոր

ԼՈՆՏՈՆ

«ՅԱՒԵՐԺԱԿԱՆ ՎԻՎԱԼՏԻՆ» ԿԱԼԱ-ՀԱՄԵՐԳԸ՝ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԲԱՒ ՎԱՅԵԼՈՂ ՀԱՅ ԵՒ ՕՏԱՐ ԵՐԱԺԻՇՏՆԵՐՈՒ ԿԱՏԱՐՈՂՈՒԹԵԱՄԲ

Յատուկ թղթակցութիւն «Նոր Յառաջ»-ին.-

1 *Մայիս 17-ի երեկոյեան, Լոնտոնի Սուրբ Քաթպերթ՚ զ եկեղեցւոյ մէջ արձագանգեցին Անթոնիո Վիվալտիի՝ մեր հոգիներուն յաւերժ քանդակուած, անմահ երաժշտութեան մեղեդիները, երբ «Քլինկեն» սենեկային նուագախումբը եւ երգչախումբը ներկայացուցին «Յաւերժական Վիվալտին» կալա-համերգը՝ նուիրուած պառոք երաժշտութեան անկրկնելի վարպետին: Հանրահռչակ մաէսթրո Սիփան Օլահի ղեկավարութեամբ համերգին մասնակցեցան հայ, բրիտանացի եւ օտար՝ միջազգային համբաւ վայելող երաժիշտներ: Տպաւորիչ կազմ մը, որ հիանալի կատարեց իր առաքելութիւնը, սրտաբուխ յարգանքի տուրք մատուցելով երգահանին, զոր շատեր կ՚անուանեն «Կարմիր քահանայ»:*

Անթոնիո Վիվալտի, որ իր կարմիր մազերուն եւ հոգեւոր կրթութեան պատճառով վաստակած էր այդ մակդիրը, պառոքի դարաշրջանի ամէնէն ազդեցիկ դէմքերէն մէկն էր, որ դասական երաժշտութեան գանձարանին մաս կազմեց իր աւելի քան 500 քոնչերթոներով, տասնեակ օփերաներով եւ հոգեւոր երգչախմբային ստեղծագործութիւններով, հսկայական ժառանգութիւն մը, որ իր անփոխարինելի ու անկրկնելի տեղը ունեցաւ համաշխարհային երաժշտութեան պատմութեան մէջ: Թէեւ մեծ երաժիշտը 1741 թուականին մահացաւ յարաբերական անյայտութեան մէջ, սակայն 20-րդ դարուն անոր վերայայտնութիւնը կրկին արթնցուց անոր բացառիկ հանճարին հանդէպ գնահատանքը, լուսափայլ մը, որ հանդիսատեսը կախարդուած վայելեց այս անմոռանալի երեկոյթի ընթացքին:

Համերգը ծայր առաւ Վիվալտիի ամէնէն կենսուրախ եւ ոգեշնչող հոգեւոր ստեղծագործութիւններէն՝ «Կլորիա»-ով, որ ի սկզբանէ գրուած էր Վենետիկի «Օսփետալէ տելլա Փիեթա»-ի աղջիկներուն համար: Ստեղծագործութիւնը վերակենդանացաւ պայծառ պարզութեամբ՝ շնորհիւ մաէսթրո Սիփան Օլահի՝ տաղանդաւոր արուեստագէտին յատուկ ձիրքին ու խմբավարման կարողութեան: «Քլինկեն» երգչախումբի կատարողութեամբ հանդիսատեսը ունկնդրեց ներդաշնակ եւ յղկուած ձայնալարերը, իսկ փողհար Վերոնիքա Այրումեան եւ յարադաշնակահար (claveciniste) Մարիա Փալազեան կենսունակ երանգ պարգեւեցին լսարանին:

Յաջորդաբար տեղի ունեցաւ դրամատիկ փոփոխութիւն Վիվալտիի ոչ այնքան ծանօթ «Տիգրան Բ.» (1724) օփերայի արիայի կատարման ընթացքին: Ան կը պատմէ հայոց թագաւոր Մեծն Տիգրան Բ.-ի մասին: Սոփրանօ Իզապելլա Գարաօղլանեան լաւագոյնս մարմնաւորեց թագուհի Կղէոպատրան «Squarciami pure il seno» արիայի կատարումով՝ բացայայտելով Վիվալտիի ստեղծագործութեան յուզական սաստկութիւնն ու այս օփերայի հանճարեղութիւնը:

Յաջորդեց իրայատուկ պահը՝ Մաէսթրո Օլահի նոր գործիքաւորուած նրբասրինգի (clarinette) քոնչերթոյի անդրանիկ ներկայացումը, որ «Օլիմփիատա» օփերայի արիաներէն մէկուն վերամշակումն էր: Նրբասրինգի սպանացի վարպետ Սիմոն Իպանեզ, որ յատկապէս ժամանած էր Լոնտոն այս համերգին համար, գրաւեց հանդիսատեսը իր անթերի թեքնիքով եւ քնարական մեկնաբանութեամբ՝ ապացուցելով, որ Վիվալտիի երաժշտութիւնը տակաւին կը ներշնչէ ժամանակակից երաժիշտներու նորարարական մտայղացումները:

Համերգի բացառիկ ելոյթներէն էր թենոր Սիփան Օլահի՝ «Իլ Ճուսթինօ» օփերայէն սիրուած «Vedrò con mio diletto» արիայի կատարումը: Անոր յուզիչ եւ ջերմ ձայնային ելեւէջները ստեղծագործութեան հաղորդեցին մտերմիկ խորութիւն՝ ընդգծելով մաէսթրո Օլահի անփոխարինելի դերը՝ միաժամանակ որպէս տաղանդաւոր խմբավար ու անկրկնելի թենոր:

Այս ելոյթին յաջորդեց «Laudamus te»-ն՝ ցնծալի զուգերգը, զոր հրաշալիօրէն կատարեցին սոփրանօներ Հայարփի Եղիկեան եւ Իզապելլա Գարաօղլանեան: Անոնց ձայները միահիւսուած էին բազմերանգ նրբագեղութեամբ, կատարելապէս համապատասխանելով ստեղծագործութեան ոգիին, պարուրուելով նուագախումբի նրբազգած նուագակցութեամբ:





Համերգի առաջին բաժինը աւարտեցաւ մէկ ուրիշ անդրանիկ ներկայացումով՝ Տօ մաժէօր քոնչերթօ սրինգի, նրբասրինգի, թաւափողի (basson) եւ նուագախումբի համար՝ Սիփան Օլահի գործիքաւորումով:

Վիվալտիի վերափոխուած, երկու սրինգներու համար քոնչերթօն ներկայացուցին մենակատարներ Նիքա Փինթըր (սրինգ), Սիմոն Իպանեզ (նրբասրինգ) եւ Ֆրանչեսքօ Տի Մաթէօ (թաւափող), ապշեցուցիչ մեկնաբանութեամբ՝ արագ ու դանդաղ կշռոյթներու յաջորդական փոփոխութեան սահուն աշխուժութեամբ: Անոնք միասին ցուցադրեցին Վիվալտիի գործիքային երկխօսութեան ձեռագրի տաղանդը:

Ընդմիջումէն ետք հանդիսատեսը ունկնդրեց հանրածանօթ «Զորս եղանակները»: Այս տարի կը նշուի սոյն ստեղծագործութեան 300-ամեակը: Ջութակահար Փոլինա Շարաֆեան ներկայացուց հիանալի մեկնաբանութիւն՝ իւրաքանչիւր եղանակին հաղորդելով թէ՛ արուեստագիտական կատարման բարձր մակարդակ, թէ՛ ալ զգացական խորութիւն, որ կրկին կ՚ընդգծէր Անթոնիո Վիվալտիի ստեղծագործութեան հանճարեղութիւնը: Այս նրբագեղ երաժշտուհիին քնքուշ կատարումը ներդաշնակ էր զգացական եղանակներու ոգիին՝ «Գարնան» քնարական հանգստութենէն մինչեւ «Ձմռան» փոթորկոտ ցրտութեան: Մաէսթրո Սիփան Օլահի ղեկավարութեամբ նուագախումբը արձագանգեց կորովով եւ ճշգրտութեամբ՝ ստեղծելով հարուստ երաժշտական «հիւսք» մը:

* * *

City Living Local Life-ի, Քենզինկթընի եւ Զելսիի թագաւորական համայնքի, Grove End Housing-ի եւ Սուրբ Քաթպերթ՚զի եկեղեցւոյ աջակութեամբ կազմակերպուած «Յաւերժական Վիվալտին» աւելին էր, քան պարզ համերգ մը. ան տօնակատարութիւն էր, որ հաստատեց, թէ դարեր ետք Վիվալտիի ձայնը տակաւին կը զօղանջէ, կը դայլայլէ եւ կը թեւածէ համայն մարդկութեան սրտերուն մէջ:

«Հենց Կոմիտաս էինք նվագում, գերմանացիները ոտքի էին կանգնում». կոնսերվատորիայի Գյումրիի մասնաճյուղի կամերային նվագախումբը համերգային շրջագայության էր

1

Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի Գյումրիի մասնաճյուղի կամերային նվագախումբը, որը ստեղծվել է 2019 թվականին՝ երիտասարդ դիրիժոր Արմեն Կարճյանի գլխավորությամբ, ապրիլի 17-ից մինչև մայիսի 3-ը Դետմոլդ քաղաքի Երաժշտական բարձրագույն դպրոցի պրոֆեսոր Արամ Բաղդասարյանի նախաձեռնությամբ ու այդ բուհի նվագախմբային ֆակուլտետի հրավերով մեկնել էր Գերմանիա՝ ելույթներ ունենալով ինչպես այս երկրի տարբեր քաղաքներում՝ Դետմոլդում, Կարլսրուհեում, Շտուտգարտում, այնպես էլ Ավստրիայի մայրաքաղաք Վիեննայում: Ի դեպ, Շտուտգարտում ու Վիեննայում համերգները նվիրված են եղել Հայոց Ցեղասպանության 110-ամյա տարելիցին, դրանք կազմակերպվել են տեղի հայ համայնքների կողմից, իսկ մնացած երեք համերգները՝ գերմանացիների: Հետաքրքիրն այն է, որ նվագախմբի համերգներն ունկնդրել են ոչ միայն տվյալ երկրներում բնակվող հայ համայնքի ներկայացուցիչները, այլ օտարազգիները: Կարլսրուհե քաղաքի Ավետարանական եկեղեցում դիրիժոր Ֆելիքս Թրայբերի ղեկավարությամբ մեր նվագախումբը կատարել է նրա ալտի Կոնցերտը, Է. Էլգարի, Ա. Դվորժակի ստեղծագործությունները, բայց երբ հնչել են Կոմիտասի անզուգական մանրանվագները՝ Սարգիս Ալամազյանի մշակմամբ, գերմանացի ունկնդիրը պահանջել է նորից ու նորից կատարել այն:

Գրեթե նույն պատկերն արձանագրվել է այս նույն քաղաքի Տեխնոլոգիական կենտրոնում, որտեղ բուհի նվագախումբը հանդես է եկել Լ. Խաչատրյանի, Պ. Չատիպավլիդիսի, Մ.Մորայի մենակատարումներով, հնչել են Վ. Ա. Մոցարտի դաշնամուրի 9-րդ՝ Es-dur Կոնցերտը, Դ. Շոստակովիչի 1-ին Կոնցերտը դաշնամուրի և շեփորի համար:

Ապրիլի 24-ին էլ ԵՊԿ Գյումրու մասնաճյուղի կամերային նվագախումբը հանդես է եկել Շտուտգարտ քաղաքում՝ համերգային հատուկ ծրագրով՝ Բադեն-Վյուրտեմբերգի ծխական քահանա Տիրատուր Սարդարյանի գործուն աջակցությամբ: Համերգը ներառված է եղել քաղաքի հայկական համայնքում Հայոց Ցեղասպանության 110-ամյա տարելիցին նվիրված հիշատակի արարողությունների շարքում:

Հայոց Ցեղասպանության 110-ամյա տարելիցին նվիրված համերգը տեղի է ունեցել նաև Վիեննայի Քաղաքային Բարեփոխական եկեղեցում *(Reformierte Stadtkirche Wien)*, հնչել են Յ.Ս.Բախի, Բ.Բրիտտենի,Կոմիտասի, Մ.Եկմալյանի, Բ. Կանաչյանի, Ղ. Սարյանի, Ա. Բաբաջանյանի, Է. Միրզոյանի, Է. Բաղդասարյանի ստեղծագործությունները:

Մենակատարները եղել են ԵՊԿ Գյումրիի մասնաճյուղի դասախոս Մերուժան Գևորգյանը, Գայանե Միրզոյանը (Ավստրիա), Կարինե Միքայելյանը (Ավստրիա), Արևիկ Իվանյանը: Վիեննայում համերգի կազմակերպիչը եղել է տաղանդավոր երաժիշտ Գայանե Միրզոյանը:

Դետմոլդ քաղաքի Երաժշտական Բարձրագույն դպրոցի *(DetmoldHochschulle für Musik)* նվագախմբային ֆակուլտետը ՝ Երևանի պետական կոնսերվատորիայի Գյումրիի մասնաճյուղի կամերային նվագախմբի հետ իրականացրել է համատեղ ծրագիր՝ վարպետության դասերով, որն ավարտվել է մայիսի 2-ին կայացած մեծ համերգով:

Դետմոլդի Երաժշտական համալսարանի *(Hochschule für Musik Detmold)* պրոֆեսոր Արամ Բաղդասարյանը, որը վերջին երեք տարիներին համագործակցում է նվագախմբի հետ՝ երիտասարդ երաժիշտների խնդրանքով դառնալով գեղարվեստական ղեկավարը, *Aravot.am*-ի հետ զրույցում անդրադառնալով նվագախմբի համերգային շրջագայությանը՝ անկեղծացավ, որ ինքը կազմակերպչական փորձ չուներ, սակայն մտածեց՝ ինչպես խթանել երիտասարդ նվագախմբին, երիտասարդ սերնդին ու Գյումրիի երաժշտական աշխարհին, որի արդյունքում էլ կազմակերպվեց նրանց այցը Գերմանիայի Դաշնություն: *«Երբ հետ եմ նայում, զարմանում եմ՝ ինչպես կարողացանք հաջողել, որովհետև իմ ընկերներն ասում էին՝ ձախողման վրա եք: Համերգները շատ լավ ընդունվեցին տեղի հասարակության կողմից, շատ ավելի մեծ արձագանք եղավ, քան ես ապասում էի: Դետմոլդ քաղաքում իմ գործունեության հինգ տարվա ընթացքում ես չեմ տեսել նմանատիպ հանդիսատես, միշտ նույն հանդիսատեսն է գալիս. քաղաքը մեծ չէ, և միշտ նույն մարդիկ են գալիս: Հոտնկայս ծափահարում էին, մանավանդ երբ վերջում հնչեց Կոմիտաս, շատ հուզվեցին, շատ զարմացան: Կարլսրուհեում էլ նույն ընդունելությունն էր, ես անձամբ այնտեղ շատ եմ նվագել, բայց նման ընդունելություն չէի տեսել, բոլորը շատ հուզված էին. ես մտածում եմ, որ յուրահատկություն կա նվագախմբի մեջ՝ երաժշտական ու մարդկային ոգին է, որից գերմանական հասարակությունը շատ ցնցված էր: Չնայած կազմակերպչական դժվարություններին, վերջիվերջո մենք երաժիշտներ ենք ու մեր մասնագիտությունը չէ կազմակերպիչ լինելը, համերգների արդյունքները շատ-շատ հաջողված էին, քան ես ապասում էի: Նվագախմբի համար էլ հեշտ չէր, նվագախմբի կեսից շատը անփորձ երիտասարդ երաժիշտներ էին, որոնք երբեք չեն գնացել դուրս, չգիտեին՝ ինչ է շրջագայությունը, թե՛ ֆիզիկապես, թե՛ հոգեպես լարված վիճակում էին, որովհետև պատասխանատու համերգներ էին, շատ էին պատասում, փորձեր անում, բայց երբ նայում եմ հետ, զարմանում են՝ ո՞նց կարողացան: Բոլոր այն մարդկանց, ում հետ կազմակերպել էինք համերգը, ուզում են հաջորդ տարի նորանոր նախագծեր անենք՝ շատ ավելի մեծ. բոլորի հետ նվագախումբն աշխատեց՝ շատ լավ տպավորություն է թողել»,* - ասաց Արամ Բաղդասյանը:

Նա ասաց, որ հինգ համերգ են ունեցել, որից երեքը կազմակերպվել է գերմանացիների կողմից՝ եվրոպական ծրագրով՝ գերմանացիների համար: *«Կոմիտասը նորություն էր նրանց համար, երևի թե ամենահետաքրքիր համարն էր ամբողջ ծրագրից, որովհետև եվրոպական երաժշտությունը գիտեն, լսել են: Ծրագիրը, որը նվագում ենք, հայտնի է, բայց երբ վերջում Կոմիտասից 1-2-3 հատվածներ, փոքրիկ ստեղծագործություններ հնչեցին, մեծ տպավորություն թողեց: Նվագում ենք ամեն ինչ, բայց հենց Կոմիտաս ենք նվագում, ողջ հասարակությունը ոտքի է կանգնում, չես էլ հասկանում՝ ինչու, որովհետև իրենցը չէ, իրենք չպիտի հասկանան, բայց այդպես չէ»,* - ասաց Արամ Բաղդասյանը: Ըստ նրա, եթե համառ աշխատեն, ճիշտ քայլեր անեն, 3-5 տարում կհաջողվի միջազգայնացնել Գյումրիի այս նվագախումբը: Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի Գյումրիի մասնաճյուղի դասախոս, կամերային նվագախմբի գործունեության համակարգող Սպարտակ Պետրոսյանն էլ պատմեց, որ Արամ Բաղդասյանի հետ ծանոթանալուց հետո որոշեցին կամերային նվագախմբում ընդգրկված ուսանողների, ինչու չէ նաև դասախոսների կատարողական մակարդակը բարձրացնել: Ըստ նրա, շրջագայությունը խթան կհանդիսանա գյումրեցի երաժիշտների համար, որպեսզի համոզվեն՝ կարելի է լավ ապրել, բարեկեցություն ապահովել ոչ միայն ժամանցային երաժշտություն, այլ նաև դասական երաժշտություն հնչեցնելով: Մեր զրուցակիցն ասաց՝ իրենց պարտքն են համարել ամեն մի համերգային ծրագրում հնչեցնել Կոմիտաս, և ում հետ համագործակցել են՝ նրանք հետաքրքրվել են՝ հաջորդ համերգը ե՞րբ է լինելու: Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի Գյումրիի մասնաճյուղի տնօրենի պաշտոնակատար տնօրեն, արվեստագիտության թեկնածու, դոցենտ Համլիկ Հարությունյանն էլ մեզ հետ զրույցում պատմեց, թե ինչպես ստեղծվեց նվագախումբը: Այն ստեղծվել է 2019 թվականին կոնսերվատորիայի միակ մասնագետ դիրիժոր, ջութակահար Արմեն Կարճյանի ջանքերով: Առիթը եղել է այն, որ Գյումրիի համայնքապետարանի մշակույթի բաժնի ղեկավար Լիլիթ Թովմասյանն առաջարկել է մասնակցել «ART Շաբաթ» փառատոնին: *«Շատ համարձակ քայլ էր, մենք չէինք սպասում, որ կկարողանային ուսանողները, զգացինք, որ կազմը շատ փոքրիկ է, պետք է ամեծացնել: Քանի որ մասնաճյուղ ենք, մեր հնարավորությունները սահմանափակ են, և ոչ բոլոր նվագարաններից ունենք բավարար քանակ, դրա համար դասախոսները նույնպես միացան: Բոլորն էլ երիտասարդ են, բոլորն էլ խոստումնալից, ամենակարևորը՝ մեծ ձգտումով: Գաղափարը բոլորին դուր եկավ: Իհարկե, քանի որ բուհական է, ամեն տարի կազմը փոխվում է. ունենք դիմորդներ, որոնք նոր պիտի սրանան բարձրագույն կրթություն, պետք է ընդունվեն կոնսերվատորիա, բայց այնքան ժամանակ են նվագում, որ կոփվել են, ձեռք են բերել անհրաժեշտ մասնագիտական պատրաստվածություն: Այդուհանդերձ կարիքը զգացվեց հատկապես կոնտրաբաս նվագարանի և ևս երկու ջութակահարների, սիրով հրավիրեցինք Երևանի պետական կոնսերվատորիայի շրջանավարտների, որոնք այսօր տարբեր կրթօջախներում աշխատում են, նրանք մեզ մոտ նույնպես դասավանդելու են»,* -ասաց Համլիկ Հարությունյանը: Ըստ մեր զրուցակցի, Արամ Բաղդասյանի գալուց հետո ի վերջո ունեցել են որոշակի կազմ, որը երևի թե հետագայում քիչ փոփոխության ենթարկվի: Նա պատմեց, որ բուհի կամերային նվագախումբը 2019 թվականից համագործակցել է համբավավոր երաժիշտ Հմայակ Դուրգարյանի հետ, որը հանդես է եկել որպես դիրիժոր, վարպետության դասեր է անցկացրել: Նվագախմբի կատարողական մակարդակը բարձրացրել է նաև Լոնդոնի թագավորական երաժշտական քոլեջի պրոֆեսոր, ջութակահար Լևոն Չիլինկիրեանը: Հինգօրյա վարպետության դասերից հետո նրա հետ համատեղ համերգ է կայացել: Բոլոր վարպետության դասերը անցկացվել են կամավորական սկզբունքով, ճանաչված երաժիշտների ցանկությամբ և կամեցողությամբ: Նվագախումբը հանդես է եկել ՀՀ ժողովրդական արտիստուհի Համլիկ Պապյանի հետ, որը նրանց շատ է ոգևորել, վստահեցրել, որ նվագախումբը կարող է լուրջ ստեղծագործություններ կատարել: Այնուհետ Երևանում հյուրախաղերի եկած շվեյցարացի անվանի դաշնակահար Ժոզեֆ-Մորիս Վեդերի հետ են ունեցել համերգ, իտալացի նշանավոր դիրիժոր Ստեֆանո Ինտրիերիի: Համլիկ Հարությունյանը նշում է, որ իրենց արդեն ճանաչում են, բոլոր համերգների ժամանակ դահլիճները լեփ-լեցուն են, թեև Գյումրիում չկա ֆիլհարմոնիկ դահլիճ, համերգների մուտքն էլ առանց տոմսերի են, ազատ, որը, նրա կարծիքով՝ ևս խրախուսելի է: *«Սրանք շատ կարևոր համերգներ են, պիտի ունենան իրենց պատշաճ գնահատումը նաև այս առումով: Մեկիկներ շատ կան, բայց բոլորս խանդավառված ենք, որովհետև նվագախումբը կարելի է ասել՝ կայացել է, ինչը որ ամենակարևորն է և վիթխարի հեռանկարային ծրագրերի շեմին ենք»,* - ասաց Համլիկ Հարությունյանը: 1974 թվականին Գրիգոր Դանիելյանը՝ Դանիել երաժիշտը, Լենինականում ստեղծել է կամերային նվագախումբ, որը փակվել է 1979 թվականին, որովհետև չեն եղել այն կադրերը, որոնք պիտի սնուցեին նվագախումբը: Իսկ այժմ, ըստ Համլիկ Հարությունյանի, կադրերին հենց կոնսերվատորիան է պատրաստում: Ըստ նրա, Գյումրին ունի երեք նվագախումբ՝ ժողովրդական գործիքների նվագախումբ, փողային նվագախումբ, սիմֆոնիկ նվագախումբ, մշակութային այս քաղաքին անհրաժեշտ է նաև կամերային նվագախումբ: Համլիկ Հարությունյանն ասում է՝ այն բուհական նվագախումբ է, սակայն իրենց երազանքն է, որ դուրս գա բուհից ու դառնա ինքնուրույն, դառնա համայնքային ու կոչվի Գյումրիի կամերային նվագախումբ: Այն, ըստ մեր զրուցակցի, կազմով փոքր է՝ բաղկացած 15 երաժիշտներից և շատ ճկուն է: Այն Արամ Բաղդասյանի առաջարկով մկրտվել է Կոմիտասի անվամբ՝ կոչվում է «Գյումրիի Կոմիտաս կամերային նվագախումբ»: Նվագախմբի առաջին ձայնասկավառակը թողարկվել է Գերմանիայում:

ԵՊԿ Գյումրիի մասնաճյուղի կամերային նվագախմբի համերգը Դետմոլդում

ՆՈՒՆԵ ԱՐԵՎՇԱՏՅԱՆ

https://www.aravot.am/2025/05/22/1489190/?fbclid=IwY2xjawKewGdleHRuA2FlbQIxMQBicmlkETFxa0N2UVNrdUVNdTllVlozAR5cOOmbj9eax_N

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԱՆՑՈՒԴԱՐՁԸ ԵՊԿ ԳՅՈՒՄՐԻԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂՈՒՄ

Ջուլիա Դարբինյան

✓ Մայիսի 18-ին, Գյումրիի Տեխնոլոգիական կենտրոնի դահլիճում կայացավ ԵՊԿ Գյումրիի մասնաճյուղի ջազ-փոփ երաժշտության բաժնի համերգը:

Ելույթ ունեցան ուսանողներ՝ Մարիամ Անտոնյանը, Անուշ Սարգսյանը, Ջուլիետա Խառատյանը, Անգելինա Աբգարյանը, Ջուլիա Դարբինյանը, Ռաֆիկ Խաչատրյանը, դասախոս Արմենուհի Գասպարյանը և «Ժպիտներ» վոկալ ստուդիայի սաները (գեղարվեստական ղեկավար՝ Արմենուհի Գասպարյան), ղեկավարներ՝ պրոֆեսոր Արմանուշ Հակոբյան, դոցենտ Լուսինե Կչոզյան, դասախոսներ՝ Լարիետա Սրաբյան, Արմենուհի Գասպարյան:

✓ Մայիսի 17-ին «Կումայրի» պատմամշակութային արգելոց-թանգարանում կայացավ համերգ ԵՊԿ Գյումրիի մասնաճյուղի ուսանողների մասնակցությամբ: Ելույթ

ԵՊԿ Գյումրիի մասնաճյուղի ռեկտոր Հ. Հարությունյանը, դասախոսները և ուսանողները «Կումայրի» պատմամշակութային արգելոց-թանգարանում

ունեցան ԵՊԿ Գյումրիի մասնաճյուղի ակադեմիական երգեցողության բաժնի ուսանողներ՝ Մելինե Ամիրյանը, Լիլիթ Աթոյանը, Սյուզի Շահինյանը, Մերի Հունանյանը, Թամարա Ոսկանյանը, Արփինե Գրիգորյանը, Ալլա Հարոյանը, Քրիստինե Խալաթյանը, Սերգեյ Փահլևանյանը, Մաքսիմ Հակոբյանը, Իրինա Գևորգյանը, ղեկավարներ՝ դոցենտներ Մերի Մկրտչյան, Սերգեյ Ջաքարյանը, դասախոս Նազան Ղազարյան, նվագակցողներ՝ դոցենտներ Լարիսա Ալեքսանյան, Մարգարիտա Ղուկասյան, Դիանա Խաչատրյան, Մարգարիտա Գրիգորյան:

✓ Մայիսի 16-ին, Վանաձորի Է.Կզարթմյանի անվ. երաժշտական դպրոցի դահլիճում տեղի ունեցավ փողային երաժշտության համերգ, որի մասնակցում էին են ԵՊԿ Գյումրիի մասնաճյուղի և Գյումրիի Ք.Կարա-Մուրզայի անվան պետական երաժշտական քոլեջի

ԵՊԿ Գյումրիի մասնաճյուղի և Գյումրիի Ք.Կարա-Մուրզայի անվան պետական երաժշտական քոլեջի դասախոսները և ուսանողները Վանաձորի Է.Կզարթմյանի անվան երաժշտական դպրոցում

ուսանողները: Հնչեցին հայ և արևմտաեվրոպական կոմպոզիտորների ստեղծագործություններ:

✓ Մայիսի 8-ին, Գյումրիի տեխնոլոգիական կենտրոնի դահլիճում տեղի ունեցավ ԵՊԿ Գյումրիի մասնաճյուղի վոկալ բաժնի համերգը, բաժնի վարիչ՝ դոցենտ Մերի Մկրտչյան: Ելույթ ունեցան բաժնի գրեթե բոլոր ուսանողները՝ Քրիստինե Խալաթյան (ստաժոր), Ալլա Հարոյան, Արփինե Գրիգորյան, Մերի Հունանյան, Մելինե Ամիրյան, Ռազմիկ Ճաղարյան, Լիլիթ Աթոյան, Սյուզի Շահինյան, Թամարա Ոսկանյան, Սերգեյ Փահլևանյան, Իրինա Գևորգյան, Մոնիկա Հարությունյան, Անգելինա Հարությունյան, Քնարիկ Ֆարմանյան, Մելինե Հարությունյան, Նարիա Խաչատրյան, Մելինե Մարգարյան, Սուսաննա Պետրոսյան, Լուսինե Առաքելյան: Դասախոսներ՝ դոցենտ Սերգեյ Ջաքարյան, Նազան Ղազարյան, Մարինե Խաչատրյան, Հեղինե Սարուխանյան, նվագակցողներ՝ Լուսինե Ղուկասյան, Մարգարիտա Գրիգորյան, Մարգարիտա Բեռնեցյան, դոցենտներ՝ Լարիսա Ալեքսանյան, Հասմիկ Ջաքարյան, Մարգարիտա Ղուկասյան, Դիանա

ԵՊԿ Գյումրիի մասնաճյուղի վոկալ բաժնի համերգին, բաժնի վարիչ՝ դոցենտ Մերի Մկրտչյան

Խաչատրյան: Հնչեցին հայ, ռուս և արևմտաեվրոպական կոմպոզիտորների վոկալ ստեղծագործություններ:

✓ Ստեփանավանի Արթուր Ղարիբյանի անվ. արվեստի դպրոցում, մայիսի 6-ին տեղի ունեցավ քանոնահար Մանե Պապիկյանի մենահամերգը, որն աչքի ընկավ բարձր կատարողական արվեստով և արժանացավ հանդիսատեսի բուռն ծափերին և գնահատականներին: Համերգի ավարտից հետո իր ելույթում դպրոցի տնօրեն Մարինե Սաքանյանը առանձնակի հպարտությամբ նշեց, որ Մանե Պապիկյանն իրենց դպրոցի սանն է եղել, ներկայումս սովորում է Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի Գյումրիի մասնաճյուղում՝ միաժամանակ դասավանդելով հարազատ դպրոցում: Այնուհետև ելույթ ունեցան և դրվատանքի խոսքեր ասացին Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի Գյումրիի մասնաճյուղի դոցենտ Մարինե Ասա-

Մանե Պապիկյանի մենահամերգը Ստեփանավանի Արթուր Ղարիբյանի անվան արվեստի դպրոցում

տրյանը, ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ, Վանաձորի Գրիգոր Հախինյանի անվան «Հորովել» երգի պարի անսամբլի գործիքային մասի ղեկավար Էլմիրա Կռոյանը, Ստեփանավանի համայնքապետարանի մշակույթի բաժնի պետ Գայանե Ղալաչյանը, համայնքի ղեկավարի խորհրդական Գագիկ Շիրմազանյանը, ով իր խոսքում կարևորեց նման մշակութային միջոցառման նշանակությունը հատկապես երիտասարդների շրջանում ազգային նվագարանների նկատմամբ հետաքրքրություն առաջացնելու առումով:

✓ Ապրիլի 29-ին, Սպիտակի երաժշտական դպրոցում կայացավ ԵՊԿ Գյումրիի մասնաճյուղի Հայ ավանդական երաժշտության կատարողական արվեստի բաժնի ուսանողուհի Հասմիկ Ազատյանի մենահամերգը: Ղեկավար՝ դոցենտ Մարինե Ասատրյան,

ԵՊԿ Գյումրիի մասնաճյուղի Հայ ավանդական երաժշտության կատարողական արվեստի բաժնի ուսանողուհի Հասմիկ Ազատյանի մենահամերգը Սպիտակի երաժշտական դպրոցում

նվագակցող՝ դոցենտ Հասմիկ Ջաքարյան: Համերգին մասնակցեցին նաև ուսանողներ Խորեն Հովհաննիսյանն ու Մանե Պապիկյանը: Հնչեցին հայ ավանդական երաժշտության նմուշներ, Կոմիտասի, Խ. Ավետիսյանի ստեղծագործությունները:

✓ Ապրիլի 29-ին, Գյումրիի տեխնոլոգիական կենտրոնի դահլիճում մենահամերգով հանդես եկավ դաշնակահարուհի, ԵՊԿ Գյումրիի մասնաճյուղի ուսանողուհի Լյուդմիլա Հովսեփյանը: Համերգի առաջին բաժնում դաշնակահարուհին ներկայացրեց մասնագիտական դասարանի ծրագիրը (ղեկավար՝ Լուսինե Ղուկասյան): Հնչեցին Յ.Ս.Բախի *cis-moll, N4* պրելյուդ և ֆուգան՝ Լավ տեմպերացված կլավիրի առաջին հատորից, Լ. Վ. Բեթհովենի *F-dur, N22, op. 54* սոնատը, Ռ.Շումանի Կրեյսլերիանան: Համերգի երկրորդ բաժնում Լ. Հովսեփյանը ներկայացրեց կոնցերտմայստերական դասարանի ծրագիրը (ղեկավար՝ դոցենտ Անահիտ Մանվելյան, ուսասիստենտ՝ Հեղինե Սարուխանյան): Կատարվեցին՝ տեսարան Ջ.Վերդիի ԱԻԴԱ օպերայից, Ֆ. Լիստի Պետրարկայի սոնետը *(N1, op. 104)*, Ս. Ռախմանինովի «Ինչ երջանկություն» և Է. Աբրահամյանի «Ինչ լավ է սարի վրա» ռոմանսները:

Լյուդմիլա Հովսեփյան

Անահիտ Վալեսյան, Մարիամ Մարգարյան, Ռազմիկ Ճաղարյան, Բուրաստան Գրիգորյան

✓ Ապրիլի 30-ին, Իջևանի միջնակարգ երաժշտական դպրոցում վարպետության դասեր անցկացրեցին Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի Գյումրիի մասնաճյուղի պրոֆեսորներ՝ Մարիամ Մարգարյանը և Անահիտ Վալեսյանը: Դասերից հետո կայացավ համերգ, որին բացի մեծարգո պրոֆեսորներից, մասնակցեցին նաև անվանի քանոնահար Նարեկ Կազազյանը, ԵՊԿ Գյումրիի մասնաճյուղի ուսանողներ Բուրաստան Գրիգորյանը, Ռազմիկ Ճաղարյանը, Իջևանի երաժշտական դպրոցի աշակերտները:

✓ ԵՊԿ Գյումրիի մասնաճյուղի վոկալ բաժնի ուսանողներ Արփինե Գրիգորյանը (ղեկավար՝ դոցենտ Մերի Մկրտչյան) և Թամարա Ոսկանյանը (ղեկավար՝ Նազան Ղազարյան) ելույթ ունեցան Գյումրիի համայնքային ցուցասրահում կայացած «Հայ կինը՝ ցեղասպանության զոհ և հերոս» խորագրով ցուցահանդեսի բացման արարողությանը:

9

Թամարա Ոսկանյան

Արփինե Գրիգորյան

«ԵՐԵՎԱՆՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ»

✓ Մայիսի 26-ին, Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի Ակուստիկ լաբորատորիայում Ուկրաինայից ժամանած կոմպոզիտոր Կառմելլա Յեպկոլենկոյի հետ հանդիպմամբ մեկնարկել է «Խաչմերուկներ. ժամանակակից երաժշտության օրեր Հայաստանում» *(Crossroads / Contemporary music day in Armenia)* միջազգային 8-րդ փառատոնը: Այն Հայաստանի համերգային և ուսումնական միջավայրում արդի երաժշտության հետևողականորեն հանրահռչակող եզակի հարթակներից մեկն է:

Հանդիպում ուկրաինացի կոմպոզիտոր Կառմելլա Յեպկոլենկոյի հետ

Փառատոնի պաշտոնական հյուր-կոմպոզիտոր Կառմելա Յեպկոլենկոն ներկայացրեց Օդեսայում կայացած «Երկու օր, երկու գիշեր» 21-րդ միջազգային ֆորումը, որը ժամանակակից երաժշտական ստեղծագործության ամենահայտնի եվրոպական հարթակն է: Կազմակերպիչներին այս տարի ևս չէր խանգարել երկրի ռազմական իրավիճակը: Օդեսայի ֆորումը ցույց տվեց Ուկրաինայի տարբեր սերնդի կոմպոզիտորներին, իսկ տարվա առանձնահատկությունը՝ նոր սերնդի կոմպոզիտորների հետ ծանոթացումն էր: «Երկու օր, երկու գիշեր»-ի անփոխարինելի գեղարվեստական ղեկավար Կառմելա Յեպկոլենկոն Երևանյան լսարանին ներկայացրեց դրվագներ Օդեսայում կայացած ֆորումից:

«Երկու օր, երկու գիշեր» փառատոնի տարբեր տարիներին մասնակցություն են ունեցել կոմպոզիտորներ Վաչե Շարաֆյանը, Միքայել Կոկժաևը, հրավիրվել է տեսաբան Ծովինար Մովսիսյանը: Հանդիպմանը ներկա Միքայել Կոկժաևն ընդգծեց, որ Կառմելա Յեպկոլենկոյի ղեկավարությամբ ֆորումը միշտ իրականացվում է բարձր մակարդակով:

Ուսումնական գծով պրոռեկտոր Արամ Հովհաննիսյանը նշեց, որ Երևանի և Կիևի, Օդեսայի կոնսերվատորիաների միջև համագործակցությունը սկսվել է 1999 թվականից և «Խաչմերուկներ. ժամանակակից երաժշտության օրեր Հայաստանում» միջազգային 8-րդ փառատոնը փառատոնը կապերն ակտիվացնելու քայլերից մեկը կլինի:

Ռեկտորի պաշտոնակատար Ծովինար Մովսիսյանը պատվավոր հյուրին հանձնեց ԵՊԿ-100 հոբելյանական մեդալը:

Ինչպես նշվում է «Խաչմերուկներ. ժամանակակից երաժշտության օրեր Հայաստանում» միջազգային 8-րդ փառատոնի պաշտոնական հաղորդագրությունում, փառատոնը դարձել է Հայաստանում առաջին նախաձեռնությունը, որն արժանացել է ակադեմիական երաժշտության ամենահեղինակավոր *«Ernst Von Siemens Musikstiftung»* ֆոնդի խիստ մրցակցային մրցանակին:

Մայիսի 27-ին տեղի կունենա 1-ին համերգը, որին մասնակցում է փառատոնի ռեզիդենտ «Ամոնանս» անսամբլը: Կհնչեն Տիգրան Մանսուրյանի, Կարմելլա Յեպկոլենկոյի, Ջուլիանո Բրակկիի, Արամ Հովհաննիսյանի, Ռուբեն Անտոնյանի և Դյորդ Կուրտագի ստեղծագործությունները: Համերգին կհնչի նաև Կ. Յեպկոլենկոյի՝ փառատոնի պատվերով և *«Ernst von Siemens»* երաժշտական հիմնադրամի ֆինանսավորմամբ ստեղծված ստեղծագործության համաշխարհային պրեմիերան:

Փառատոնի հունիսի 9-ի համերգին հայ կոմպոզիտորական մի քանի սերունդը ներկայացնող ստեղծագործությունները և պրեմիերաները կկատարի փառատոնի գաղափարով ծնունդ առած *«Ensemble Boomerang»*-ը, որը ներկայացնում են Երևանի Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիայի ուսանողները:

Մայիսի 28-ին, ժամը 11:00, ԵՊԿ Ակուստիկ լաբորատորիայում կկայանա Կառմելա Յեպկոլենկոյի Վարպետության դասը:

✓ Յոլյանի անվան արյունաբանական կենտրոնի մանկական և մեծահասակների բաժինների այցելուները մայիսի 22-ին ունեցան անակնկալ համերգ՝ ԵՊԿ ակադեմիական երգեցողության բաժնի 2-րդ կուրսի ուսանողուհի Ալիսա Մանուկյանի (ղեկավար՝ պրոֆեսոր Կարինե Մկրտչյան) և Առնո Բաբաջանյանի անվան երաժշտամանկավարժական քոլեջի շրջանավարտ, քանոնահար Յողիկ Մուրադյանի կատարմամբ:

Յողիկ Մուրադյան, Ալիսա Մանուկյան

Պատանի կատարողներն առաջին անգամ մասնակցեցին երաժշտաթերապիայի ծրագրին, որը համատեղ իրականացնում են ԵՊԿ Միջառարկայական մասնագիտացման կենտրոնը (ղեկավար՝ դոցենտ Լիլիթ Եփրեմյան) և *DoReMeet* կրթամշակութային ՀԿ-ը (ղեկավար՝ Թամարա Օնանյան): Համերգի դասական ձևաչափից խիստ տարբերվող այս երաժշտական մտերմիկ զրույցի միջոցով արտիստները կարողացան արագորեն հաղթահարել կարեկցանքից և ապրումակցումից առաջացած մեծ հուզմունքը և ոգևորիչ, կենսահաստատ ելույթով հույս ու հավատ ներշնչեցին ոչ միայն պացիենտներին, այլև հիվանդանոցի անձնակազմի անդամներին: Հնչեցին հայ կոմպոզիտորների երգեր և հայկական ժողովրդական մեղեդիներ: Փոքրիկները տեղում իմպրովիզներ կատարեցին դափով, քանոնով և շիշխկան երաժշտական գործիքներով՝ անսպասելի կերպով բացահայտելով վառ երաժշտական ունակություններ:

✓ Մայիսի 21-ին երևանյան *LOFT*-ում «Հիշողության սրճարանի» (Ալցհայմերի ախտանիշով տառապող մեծահասակների խումբ) մեծ ոգևորությամբ ընդունվեց Երևանի Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիայի ակադեմիական երգեցողության բաժնի 3-րդ կուրսի ուսանողներ՝ Էլեոնորա Հարությունյանի (դասախոս՝ դոցենտ Ջ. Նազարյան) և Խորեն Քոթանջյանի (դասախոս՝ պրոֆեսոր Ա. Քոչարյան) համատեղ համերգը՝ Միջառարկայական մասնագիտացման կենտրոնի (ղեկավար՝ դոցենտ Լ. Եփրեմյան) և *DoReMeet* կրթամշակութային ՀԿ (ղեկավար՝ Թ. Օնանյան) համատեղ ծրագրի շրջանակներում:

ԵՊԿ ակադեմիական երգեցողության բաժնի երրորդ կուրսի ուսանողներ՝ Էլեոնորա Հարությունյանի և Խորեն Քոթանջյանի համատեղ համերգը երևանյան LOFT-ում

Արտիստները կիթառի ուղեկցությամբ կատարեցին հանրահայտ երգեր՝ հրավիրելով ձայնակցելու հետաքրքրված ունկնդրին, այնուհետ անցկացրին ռիթմիկ ինտերակտիվ խաղեր, իսկ հանդիպման ավարտին մատուցեցին անակնկալ՝ Խորեն Քոթանջյանի սաքսոֆոնի մեղեդիների ներքո ներկաները հրավիրվեցին պարի:

ՀԱՄԵՐԳ ՄԽԻԹԱՐ ՍԵԲԱՍՏԱՑԻ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐՈՒՄ

Մայիսի 13-ին, ԵՊԿ իրանցի, իրանահայ և ժողովրդական գործիքներ մասնագիտացմամբ սովորող ուսանողներ Օտարերկրյա ուսանողների ուսումնական հարցերով պատասխանատու, երաժշտության պատմության ամբիոնի դասախոս, երաժշտագետ Լիլիթ Մարտիրոսյանի համակարգմամբ մասնակցեցին Հայ-Իրանական մշակույթի օրերին: Ծրագիրն իրականացվում է Մխիթար Սեբաստացի կրթահամալիրի նախաձեռնությամբ: Ինչպես նշում են կազմակերպիչները, նախագծի նպատակներից է հնարավորություն տալ կրթահամալիրի սաներին և հանրությանը ծանոթանալու իրանական մշակույթի տարբեր շերտերի, խրախուսելու ստեղծագործական համագործակցությունը երկու մշակույթների ներկայացուցիչների միջև:

Մայիսի 12-ին կրթահամալիրի հյուրն էր երաժշտագետ, արվեստագիտության դոկտոր, ԵՊԿ պրոֆեսոր Լիլիթ Երնջակյանը, ով բանախոսություն էր ունեցել «Հայ-Իրանական երաժշտական փոխառնչություններ» թեմայով:

ԵՊԿ դասախոս, օտարերկրյա ուսանողների ուսումնական հարցերով պատասխանատու՝ Լիլիթ Մարտիրոսյան, «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի հիմնադիր տնօրեն և ծրագրերի ղեկավար՝ Աշոտ Բլեյան, ԵՊԿ իրանցի, իրանահայ և ժողովրդական գործիքներ մասնագիտացմամբ սովորող ուսանողներ

Մայիսի 13-ի հանդիպմանը ներկա էին կրթահամալիրի տարբեր դասարանների աշակերտներ, ուսուցիչներ, հյուրեր: Լ. Մարտիրոսյանը լսարանին ծանոթացնելով օրվա երաժիշտներին, ընդգծեց, որ Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքացի ուսանողները ակտիվ մասնակցում են մեր բուհի նախագծերում: *«Օրինակ, Մեհրշադ Զիաբարին պատրաստվում է մենահամերգի, առանց Դիբա Փիշդադիի անհնար է պատկերացնել դաշնամուրային կամ կամերային երաժշտության որևէ ծրագիր, գրեթե ամենօրյա հետաքրքիր գաղափարներ մտածում և իրականացնում է Դերեն Բրայանը, իսկ Փոյա Համիդին, Սիոնա*

10

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԱՆՑՈՒԴԱՐՁԸ ԵՊԿ ԳՅՈՒՄՐԻԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂՈՒՄ

Շնորհավորում ենք

8

ԵՊԿ Գյումրիի մասնաճյուղի նախապատրաստական բաժնի ուսանող Հարություն Ասատրյանին (պրոֆեսոր Սերգեյ Քեչեկի դասարան)՝ Իտալիայում կայացած դաշնակահարների միջազգային մրցույթում 2-րդ մրցանակի արժանանալու առթիվ:

ԵՊԿ վոկալ բաժնի ուսանողուհի Թամարա Ոսկանյանին, (դասախոս Նազան Ղազարյան, նվագակցող՝ դոցենտ Հասմիկ Զաքարյան)՝ Փարիզում կայացած միջազգային մրցույթում 1-ին մրցանակի արժանանալու առթիվ:

ԵՊԿ Գյումրիի մասնաճյուղի նախապատրաստական բաժնի ուսանող Հարություն Ասատրյանին (պրոֆեսոր Սերգեյ Քեչեկի դասարան)՝ Իտալիայում կայացած դաշնակահարների միջազգային մրցույթում 2-րդ մրցանակի արժանանալու առթիվ:

https://www.facebook.com/gyumriconservatory

Պատրաստեց՝ ԱՐՄԻՆԵ ԱԹՈՅԱՆԸ

«ԵՐԵՎԱՆՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ»

9

Առաքելյանը դաշնամուրային ֆակուլտետի խոստումնալից երիտասարդներ են: Կարևոր է, որ մեր հարևան երկրում արժևորվում է ակադեմիական կրթությունը, իսկ այդ ճանապարհներից մեկն անցնում է հենց Հայաստանի կոնսերվատորիայում»:

Ուդահար Դավիթ Սայադյանը և սանթուրահար Ռիմա Խաչատրյանը համերգին հանդես եկան որպես տարածաշրջանային նվագարանների Հայաստանյան դեսպաններ. այդ գործիքները տարբեր երկրներում ունեն կատարողական յուրահատուկ սկզբունքներ և կերպեր, Մխիթար Սեբաստացի կրթահամալիրում կայացած համերգին հնչեցին ՀԱՅԵՐԵՆ:

Հայ-Իրանական հարաբերությունները, անդադար մշակութային փոխազդեցության բազմադարյան պատմություն է: Լ. Մարտիրոսյանի խոսքը և ԵՊԿ ուսանողների կատարումները նոր ստեղծագործական համագործակցության հեռանկարների հնարավորություն տվեցին, իսկ համերգը բնորոշվեց որպես «Հայ-Իրանական մշակութային օրերի» առանցքային իրադարձություն:

✓ Մայիսի 11-ին, Առնո Բաբաջանյան համերգասրահում կայացավ ԵՊԿ Կամերային գործիքային անսամբլի ամբիոնի պրոֆեսոր Ալիսա Արզումանյանի դասարանի սաների հաշվետու համերգը:

Սոնատից մինչև դաշնամուրային կվարտետ ներկայացնող ժանրերի միջոցով կամերային անսամբլային երկացանկի ծանրակշիռ օրինակները հնչեցին կատարողական ու գեղարվեստական հասուն մեկնաբանմամբ՝ ցույց տալով պրոֆեսիոնալ երաժշտական կրթությանն արժանի որակ:

ԵՊԿ Կամերային գործիքային անսամբլի ամբիոնի պրոֆեսոր Ալիսա Արզումանյանի դասարանի սաների հաշվետու համերգը

✓ Մայիսի 5-ին կայացավ ԵՊԿ Ջազ-փոփ երաժշտության ամբիոնի անսամբլների համերգը, որտեղ ներկայացան վոկալ և գործիքային անսամբլային դասարանների ուսանողները՝ Տատյանա Մինասյանի և Դավիթ Գյոդակյանի ղեկավարությամբ:

Համերգին ելույթ ունեցող երգչախմբին նվագակցեց դաշնակահար Կարեն Սարաֆյանը:

Ծրագրում ընդգրկված էին դասական ջազային կոմպոզիցիաներ՝ *"Lullaby of Birdland", "It Don't Mean a Thing", "My Favorite Things"* և ժամանակակից փոփ գործեր՝ *"How Deep Is Your Love", "Stand Up"*: Համերգն ավարտվեց ամբիոնի վարիչ՝ պրոֆեսոր Նարինե Զարիֆյանի հեղինակային *"My Eccentric Nature"* հրաշալի ստեղծագործությամբ:

✓ Զագրեբի Երաժշտական ակադեմիայի պրոֆեսոր Դարկո Դոմիտրովիչի երկօրյա վարպետության դասերը կոնցերտմայստերության դասընթացի դաշնակահարների և ակադեմիական երգեցողություն մասնագիտացմամբ ուսանողների համար վոկալ ստեղծագործությունները մեկնաբանելու լրացուցիչ հմտության հնարավորություններ էին:

✓ Մայիսի 1-ին ԵՊԿ Լարային կվարտետի ամբիոնը՝ վարիչի ժամանակավոր պաշտոնակատար Թերեզա Նաչարյանի ղեկավարությամբ ներկայացավ 2024-2025 ուսումնական տարվա հաշվետու համերգով:

Կվարտետը լարային գործիքների մասնագիտացմամբ սովորող յուրաքանչյուր ուսանողի համար կատարողական հմտության լավագույն ցուցիչներից մեկն է: Հայտնի է, որ այստեղ գործիքի վիրտուոզ կարողություններին զուգահեռ կարևոր է անսամբլային տեխնիկայի պրոֆեսիոնալ հմտությունների բազմամակարդակ համակարգի տիրապետումը. սինխրոնությունը, անսամբլային արտիկուլյացիան, մետրոռիթմիկ ու տեմպային առանձնահատկությունները, անսամբլային լսողության ձևավորումը, ֆրազավորումը, տեմբրային - դինամիկ երանգավորումները, պատրաստությունը

Զագրեբի Երաժշտական ակադեմիայի պրոֆեսոր Դարկո Դոմիտրովիչի վարպետության դասին

ԵՊԿ Լարային կվարտետի ամբիոնի հաշվետու համերգին, ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար՝ Թերեզա Նաչարյան

հոգեբանական ու գեղագիտական մակարդակներում: Լարային կվարտետը ակադեմիական երաժշտության գործիքային ժանրերի սանդղակում առաջնային, լրջագույն տեսակն է և ուսումնական պրոցեսում առավել քան կարևոր է կվարտետային ամբիոնի աշխատանքը:

✓ Զագրեբի երաժշտական ակադեմիայում *Erasmus+* փոխանակման ծրագրով սովորող ԵՊԿ ուսանողներ՝ ջութակահար Հայկ Մարտիրոսյանը և դաշնակահար Լիլիթ Մարտիրոսյանն իրենց համերգային և ուսումնական գործունեությամբ շարունակում են հանրահռչակել հայ կոմպոզիտորական ու ժամանակակից կատարողական արվեստը:

Ապրիլի 24-ին նրանք ելույթ ունեցան Հայ-Խորվաթական համայնքների և *Napretkov kulturni centre – Zagreb HKD Napredak*-ի կազմակերպված Հայոց Ցեղասպանության 110-րդ տարելիցին նվիրված «110 բոպե 110 տարվա համար» խորագրով համերգին: Հրավիրվածների թվում էին Խորվաթիայի խորհրդարանի անդամ տիկին Ջդրավկա Բուշիչը և Արտաքին և եվրոպական գործերի նախարարության ներկայացուցիչ տիկին Դանկա Պետրիչևիչը, Հայ-Խորվաթական համայնքի անդամներ, երաժիշտներ, ուսանողներ, գործընկերներ և հայ երկրպագուներ:

Լիլիթ Մարտիրոսյան

Հայկ Մարտիրոսյանը և Լիլիթ Մարտիրոսյանը կատարեցին Կոմիտասի «Ծիրանի ծառ» և «Կռունկ» ստեղծագործությունները: *ERASMUS+* ծրագրով իսպանացի ուսանող-կլառնետահար Խոսե Անտոնիո-Գարսիա Տրևիջանոյի հետ նաև հնչեցրեցին Ալեքսանդր Հարությունյանի Սյուիտը: Համերգին մասնակցեցին տենոր Հայկ Վարդանյանը և Երևանյան կոնսերվատորիայի Ակադեմիական երգեցողության ամբիոնի կոնցերտմայստեր Կատարինե Հովսեփյանը, ովքեր նախորդ օրերին համերգներով հանդես էին եկել Իտալիայում: Կ.Հովսեփյանը նվագեց հատվածներ Կոմիտասի «Յոթ պար» ցիկլից, Հ. Վարդանյանի հետ միասին ներկայացրեցին «Երկինքն ամպել է», «Քելե, քելե», «Քանի վուր ջանիմ» երգերը, ապա՝ Զագրեբի երաժշտական ակադեմիայի պրոֆեսոր Էվա Կիրիմայեր Բիլիչի հետ չորս ձեռքով կատարեցին Ստեփան Շաքարյանի երկու դաշնամուրային ստեղծագործություններից:

Խորվաթաբնակ դաշնակահար, անվանի մանկավարժ, Զագրեբի երաժշտական ակադեմիայի պրոֆեսոր Ռուբեն Դալիբալթայանի բարձրակարգ կատարմամբ հնչեցին Կոմիտասի «Օրորը» և Առնո Բաբաջանյանի «Էքսպրոմտը»: Դալիբալթայանների երաժշտական ընտանիքից՝ թավջութակահար Անդրեյ Դալիբալթայանը ջութակահար Հայկ Մարտիրոսյանի և դաշնակահար պրոֆեսոր Եվա Կիրիմայեր Բիլիչի հետ կատարեցին Առնո Բաբաջանյանի «Նոկտյուրնը»: Համերգի գեղարվեստական ղեկավարն էր դաշնակահար, պրոֆեսոր Ցուլիա Գուբայդուլինան:

Հայկ Մարտիրոսյան

Օրվա ուղերձում Հայ-Խորվաթական համայնքի նախագահ Ալինա Գիշյանն ընդգծել է, որ համերգը վկայությունն է մեր նախնիների անխորտակելի ոգու և մեզ թողած նրանց ժառանգության մնայուն ուժի...

Ճշմարտության և արդարության համար պատասխանատվությունը պահանջում է պահպանել XX դարի սկզբին հայերի դեմ կատարված ոճրագործության հիշատակը: Երեկոն նվիրված է առնվազն 1,5 միլիոն հայերի հիշատակին, նրանց ճիչերը արձագանքում են մինչ օրս վերապրած սերունդների հոգիներում...

«Այս երեկո, բացի զոհվածներին հարգելուց, նրանք շնորհակալություն են հայտնում հայ ժողովրդի զարմանալի փոկունությանը... Չնայած բոլոր դժվարություններին, հայ ժողովուրդը երբեք չի հանձնվում, չի դադարում զարգանալ, կառուցել իր կյանքը, և հենց սեփական ինքնությունը՝ մշակույթն ու ոգին դապտիարակելու և պահպանելու շնորհիվ՝ հսկայական ներդրում ունենալ այն երկրներում, որտեղ շարունակել է ապրել»:

https://www.facebook.com/YerevanStateConsevatory

ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԵՐԵՎԱՆԻ ԿՈՄԻՏԱՍԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻԱ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
Վկայական N 03Ա059505 տրված 7.04.2003թ.
ՀԻՄՆԱԴԻՐՆԵՐ՝ Կոմիտասի անվ. ԵՊԿ ՊՈԱԿ
© ՍԵՐԳԵՅ ՍԱՐԱՖՅԱՆ, © ԳՈՀԱՐ ՇԱԳՈՅԱՆ
Գլխավոր խմբագիր՝ ԱՐՄԻՆԵ ԱԹՈՅԱՆ
Թողարկման պատասխանատու՝ ԳՈՀԱՐ ՇԱԳՈՅԱՆ
Խմբագիրներ՝ ԳՈՀԱՐ ՇԱԳՈՅԱՆ (հայ. լեզու)
ՍՈՖԱ ԱԶՆԱՈՒՐՅԱՆ (ռուս. լեզու)
Գեղարվեստական խմբագիր՝
ԳՈՀԱՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Արտատպումը միայն «Երաժիշտ» ամսաթերթի գրավոր արտոնությամբ: Խմբագրությունը միշտ չէ, որ համամիտ է հեղինակների կարծիքներին կամ տեսակետներին:
Նյութերը չեն գրախոսվում և չեն վերադարձվում:

Գովազդի տեղադրման համար դիմել խմբագրություն նշված հասցեով.

Ծավալը 10 էջ: Ստորագրված է 30.05. 2025:
Գինը 200 դրամ: Տպաքանակը՝ 101:

Մեր կայքում տեղ գտած հրապարակումների հեղինակային իրավունքը պատկանում է բացառապես «Երաժիշտ» ամսաթերթի «ԵՊԿ հրատարակչությանը» (http://yksclibrary.am/ conservatory.am): Այլ ՋԼՄ-ներում սույն կայքի հրապարակումներից որևէ մեկը ամբողջական վերահրապարակելու համար անհրաժեշտ է «ԵՊԿ հրատարակչության» (http://yksclibrary.am/ conservatory.am) համաձայնություն: Լրատվամիջոցները կարող են «Երաժիշտ» ամսաթերթից մեջբերումներ վերահրապարակել միմիայն հատվածաբար՝ պարտադիր օգտագործելով հիպերհղում:

0001, ք. Երևան, Մարկ Գրիգորյան 2
+374 10 52 39 93+118
+ 374 55 00 21 62
http://www.conservatory.am, http://yksclibrary.am/
E-mail: yerazhisht@gmail.com
https://www.facebook.com/Yerazhisht-newspaper-Yerevan-State-Conservatory-996490150508214/